

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՆՈ-1**  
**Սուբսիդիա տրամադրելու մասին**

ք. Երևան

«30» «հունվար» 2017թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Երևանի <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիր» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Ա.Բլեյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Սույն պայմանագրով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «Ներառական կրթություն» ծրագրով նախատեսված, պետական չափորոշչին համապատասխան միջին տարեկան 99 սովորողի ուսուցումը կազմակերպելու համար /այսուհետ ծառայություն/, ընդ որում՝

1. տարրական ընդհանուր կրթության գծով միջին տարեկան 43 սովորողի համար,
2. հիմնական ընդհանուր կրթության գծով միջին տարեկան 49 սովորողի համար,
3. միջնակարգ /լրիվ/ կրթության գծով միջին տարեկան 7 սովորողի համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1. Վերահսկել կատարողին հատկացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը

2.1.2. Պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետներում.

2.1.3. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2. Կատարողն իրավունք ունի.

2.2.1. Պատվիրատուից ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և կարգով:

2.3. Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1. Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն.

2.4. Կատարողը պարտավոր է.

2.4.1. Սովորողների ուսուցումն իրականացնել պետական չափորոշչին և առարկայական չափորոշիչներին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով.

**3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ**

3.1. Սույն պայմանագրով նախատեսված ՀՀ բյուջեից պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 48272000 (քառասունութ միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ, ընդ որում՝

1. տարրական ընդհանուր կրթության գծով 20966600 (քսան միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ,

2. հիմնական ընդհանուր կրթության գծով 23892200 (քսաներեք միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

3. միջնակարգ /լրիվ/ կրթության գծով 3413200 (երեք միլիոն չորս հարյուր տասներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուն 3.1 կետումն շված գումարը «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն փոխանցում է Կատարողի հաշվին համամասնորեն՝ ամսական կտրվածքով՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի /այսուհետ Հավելված/, ոչ ուշ քան տվյալ

ամսվա 10-ը: Վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվին փոխանցելու միջոցով:

**4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

4.1.Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

**5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄ**

5.1.Սույն պայմանագրով նախատեսված ծառայության ընդունումը կատարվում է համաձայն հանձնման-ընդունման ակտի՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

**6.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

6.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

**7.ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

7.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, անբաժանելի մաս կազմող հավելվածից /1 էջ/, և հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

**8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 2 շենք  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011005478  
Հ/Հ 900011005486  
Հ/Հ 900011005494  
ՀՎՀՀ 02512868



**ԿԱՏԱՐՈՂ**

«Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ  
ք.Երևան, Ա. Բաբաջանյան 25  
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ  
Հ/Հ 163218137665  
ՀՎՀՀ 01804186



Ա.Բլեյան  
/ստորագրություն/